



ՄՊՀՀ մամլո հաղորդագրություն # 4

Երևան, Հայաստան – Հունիսի 16, 2007թ.

ՆՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ ՊԱՏՎԻՐԱԿՎՈՒՄ Է ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն (ՀՀ ԱՍՀՆ), ԱՄՆ ՄՁԳ Հայաստան սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի աջակցությամբ, այսօր, ժամը 15:00-ին, անցկացրեց նախամրցույթային տեղեկատվական սեմինար հասարակական կազմակերպությունների (ՀԿ) համար, ովքեր դիմելու են դրամաշնորհի մրցույթին: Մրցույթի նպատակն է ս./թ. աշնանը Հայաստանում ստեղծել փորձնական ցերեկային խնամքի համայնքային կենտրոն(ներ) հաշմանդամ մարդկանց համար առանց տարիքային սահմանափակման:

Ցերեկային խնամքը համարվում է ժամանակավոր օգնության ծառայություն, որը տրամադրվում է հաշմանդամ անդամ ունեցող ընտանիքներին: Այն գործիք է, որով կարելի է կանխել խնամք մատուցող հաստատություններում հաշմանդամների թվաքանակի ավելացումը և նպաստել հաշմանդամի ներառմանը հասարակություն: Ցերեկային խնամքի օգնությամբ կարելի է մեղմացնել հաշմանդամի խնամքն իրականացնողի սթրեսային վիճակը՝ դրանով իսկ հնարավորություն տալով նրան առավել հանգիստ վերսկսելու հաշմանդամի խնամքը:

Ս./թ. հունիսի 1-ին ՀՀ ԱՍՀՆ նախարարությունը, ԱՄՆ ՄՁԳ Հայաստան ՄՊՀՀ ծրագրի աջակցությամբ, բացված հայտարարեց ծրագրային առաջարկների մրցույթը պետական գրանցում ունեցող ՀԿ-ների համար՝ հաշմանդամների ցերեկային խնամքի համայնքային կենտրոն ստեղծելու, որը իր տեսակի մեջ առաջին փորձնական նախագիծն է՝ կոչված նոր մտածելակերպ ներկայացնելու սոցիալական ծառայությունների մատուցման գործում Հայաստանում: Ծրագրերը սպասվում է, որ ինճը ամսից մինչ 18 ամիս կտևեն և կտատանվեն 15,000 – 25,000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ բյուջետային չափով:

Մրցույթը կաջակցի ցերեկային խնամքի համայնքային ծառայություն տրամադրող կազմակերպություններին, որպեսզի հանրային ծառայություններն ավելի արդյունավետ մատուցվեն, ինչպես նաև տեղական միջոցներն իրենց դրական օգտագործումը գտնեն կառավարության հետ ջանքերի, փորձի և միջոցների միավորման միջոցով: Ծրագիրը կաջակցի հանրապետությունում համայնքային ցերեկային խնամքի ծառայությունների զարգացման աշխատանքներին, որոնք հիմնված կլինեն հաշմանդամների կարիքների վրա և կտրամադրեն այնպիսի ծառայություններ, որոնք կբարձրացնեն հաշմանդամների ակտիվությունը և նրանց ինքնուրույնությունը:

Սեմինարը հետաքրքրված ՀԿ-ների տեղեկատվություն տրամադրեց դրամաշնորհի նպատակների մասին, ինչպես նաև, թե ինչ տեսակի գործունեություն է ֆինանսավորվելու, ինչ գնահատման չափանիշներ են կիրառվելու, որոշումների կայացման գործընթացը, մրցույթի ժամանակացույցի և հայտերի լրացման ու ներկայացման կարգի մասին: Այսպիսով, առաջարկների ներկայացման վերջնաժամկետը հունիսի 30-ն է, որից հետո ընտրական հանձնաժողովը՝ կազմված ՀՀ ԱՍՀՆ, ԱՄՆ ՄՁԳ, ՄՊՀՀ ծրագրի և քաղաքացիական հասարակության փորձագետների կողմից, կուսումնասիրի և կընտրի լավագույն հայտերը՝ կատարողականի, ծրագրի նկարագրության և հիմնավորման, ինչպես նաև բյուջետային հիմնավորումների հիման վրա:

Սպասվում է, որ դրամաշնորհը հնարավորություն կընձեռի հաշմանդամ մարդկանց ստանալ տարբեր բայց ինտեգրացված ծառայություններ, և, որ կնպաստի ցերեկային խնամքի համայնքային կենտրոն ծառայության փորձնական մոդելի ստեղծմանը, որը կիրառելի կլինի հանրապետության տարածքով և շարունակականություն ու կայունություն կապահովի կառավարության հետ գործընկերության միջոցով ծառայությունների մատուցման գործում:

Մրցույթի արդյունքները կհայտարարվեն ս./թ. օգոստոսի 30-ին:

###



ՄՊՀՀ ծրագիրը 2007-2011թթ. ընթացքում հանրապետությունում աջակցելու է սոցիալական ոլորտի բարեփոխումների երկրորդ փուլի իրականացմանը: Ծրագրի նպատակն է ամրապնդել Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերը, բարելավել գործընկերների ինստիտուցիոնալ հնարավորությունները, ինչպես նաև ընդլայնել սոցիալական ծառայություններ տրամադրող հասարակական կազմակերպությունների կարողությունները: